Արձանագրություն 3

ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մարզական գույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	14.10.2019թ.
	ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գոհար Մամիկոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
	Արտավազդ Գևորգյան /գնահատող/
	Ալլա Մարտիրոսյան /գնահատող/
	Մարգարիտա Ասլյան /բացող/
	Անուշ Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անուշ Մարգարյան
Բացակայում է հանձնաժողովի անդամ՝	Արշակ Սարգսյան /գնահատող/

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Գ. Մամիկոնյան)

1.1 <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ն, <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ն և <<Սիթի Սպորտ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ն, <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ն և <<Սիթի Սպորտ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում են «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Գ. Մամիկոնյան)

2.1 **<<Սիթի Սպորտ>> ՍՊԸ**-ի կողմից 4-րդ չափաբաժնի համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Հավելված 3.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական-բնութագիրը լրացված է թերի:

- Ներկայացված 23.11.2016թ <<Դայմոնդ Հաուզ>> ՓԲԸ-ի հետ կնքված և 20.08.16թ Հայաստան Համահայկական Հիմնադրամի հետ կնքված պայմանագրերը և դրանց առնչվող փաստաթղթերը, 20.08.2016թ Հայաստան Համահայկական Հիմնադրամի հետ կնքված պայմանագիրը և դրան առնչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

2.2 **<<Սպորտ Սիթի>> ՍՊԸ**-ի կողմից 2-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 24.07.2018թ ՀՀ ոստիկանության զորքերի հետ կնքված թիվ ՀՀԿԱՈՁԳՀԱՊՁԲ-18/12/ԱԲ/1/ՖԾ/110, 30.03.2017թ Երևանի քաղաքապետարանի հետ կնքված թիվ ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/17/3, 06.06.16թ ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/44-4 և 17.11.16թ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ կնքված թիվ ՍՊ-ԲԸԱՊՁԲ-16/01 պայմանագրերը և դրանց առնչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

2.3 **<<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ**-ի կողմից 1-ին և 3-րդ չափաբաժինների համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 01.09.2017թ կնքված թիվ 70/17-Մ3, 28.09.17թ կնքված թիվ 0848300058917000161 և 06.02.19թ կնքված թիվ 6471/1539-2019 պայմանագրերը և դրան առնչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ին, <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ին և <<Սիթի Սպորտ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

3. Գնման ընթացակարգում մասնակցության իրավունքի վերաբերյալ ստուգումներ կատարելու մասին

(Գ. Մամիկոնյան)

3.1 Սույն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած <<Սիթի Սպորտ>> և <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ները հավաստել են, որ բացակայում է փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը տվյալ գնման գործընթացին, սակայն ուսումնասիրելով վերջիններիս կազմակերպությունների անվանումների նմանությունը և դրանց տնօրենների անուն, ազգանուն և հայրանունների որոշակի համընկնումը հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով հրավերի 7.26 կետը ստուգել վերջիններիս ներկայացրած տվյալների իսկությունը՝ ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը նրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

3.2 Հինք ընդունելով 3.1 կետը հանձնաժողովը որոշեց դիմել ՀՀ ոստիկանություն <<Սիթի Սպորտ>> և <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ների հայտերով ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Մամիկոնյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը 1-3 և 5-7 չափաբաժինների համար կազմակերպել մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ժամը 11:30-ին Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում, իսկ 4-րդ չափաբաժնի համար նիստը շարունակել ՀՀ ոստիկանությունից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո ժամը 11:30-ին Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Գոհար Մամիկոնյան /նախագահ/

---------- Արմեն Ավետիսյան

---------- Արտավազդ Գևորգյան

---------- Ալլա Մարտիրոսյան

---------- Մարգարիտա Ասլյան

---------- Անուշ Գևորգյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար/